

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Բոլոր առաջադրանքները կատարել տրամադրված հարցարանների համապատասխան բաժիններում՝ առանց ավելորդ անգամ արտագրելու:

Առաջադրանք 1. (11 միավոր)

1.1. առաջադրանքը գնահատվում է 9 միավորով: Յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0,25 միավոր, յուրաքանչյուր սխալ ուղղագրության համար՝ 0,5 միավոր:

1.2. և 1.3. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավորներով:

Առաջադրանք 2. (7 միավոր)

2.1. առաջադրանքի համար տրվում է 3 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

2.2. առաջադրանքների համար տրվում է 4 միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

Առաջադրանք 3. (8 միավոր)

3.1., 3.2. առաջադրանքների համար տրվում է 3-ական միավոր. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

3.3. առաջադրանքը գնահատվում է 2 միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավորով:

Առաջադրանք 4. (8 միավոր)

4.1., 4.3 առաջադրանքները գնահատվում են 2-ական միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով: 4.2. առաջադրանքը գնահատվում է 4 միավորով. յուրաքանչյուր ճիշտ պատասխան գնահատվում է 0,5 միավորով:

Առաջադրանք 5. (6 միավոր)

5.1. և 5.2. առաջադրանքների համար տրվում է 2-ական միավոր. յուրաքանչյուր ամբողջական ճիշտ պատասխան գնահատվում է 1 միավորով: 5.3. և 5.4. առաջադրանքների ճիշտ պատասխանները գնահատվում են 1-ական միավորով:

Յուրաքանչյուր հարակից սխալի համար հանվում է 0,25 միավոր:

ՏԱՐԲԵՐԱԿ 1

Առաջադրանք 1 (11 միավոր)

1.1 Անհրաժեշտության դեպքում գրել տառերը և կետադրել բնագիրը (9 միավոր, յուրաքանչյուր սխալ կետադրման համար հանվում է 0, 25 միավոր, յուրաքանչյուր սխալ լրացված տառի կամ երկհնչյունի համար հանվում է 0,5 միավոր):

Ձմեռը հանդարտորեն եկավ ու նստեց: Խոշոր ու փափուկ փաթիլներով ձյունն իջնում է աշխարհի վրա, և զինակիցը սառնամանիքն է: Անտառեզրին փորված մեր խրամատներում անդադրում անցուդարձ է: Փորձված զինվորները, ովքեր խրամատում են եղել ու տեսել անցյալ տարվա ձմեռը, ասում են՝ սառնամանիքն ավելի վտանգավոր հակառակորդ է, քան թշնամին, որովհետև վերքին դիմանալ հնարավոր է, սառնամանիքին՝ ոչ: Ձյունը գու՞գել է անտառը ու նրան լուսավորել ներսից, և անտառն ասես կորցրել է իր ծանրությունը, թեթևացել ու դարձել է հեքիաթների հավաքատեղի՝ իր հրաշապատում գրույցների յուրօրինակ հերոսներով:

Ակնդետ նայում եմ խավարի միջով հազիվ նշմարվող լույսի ուղղությամբ. հակառակորդի խրամատները, ձուլվելով գիշերային մշուշի մեջ, համարյա չեն երևում: Ձյունը սպիտակ սավան է փռել մեր և նրանց միջև՝ ծածկելով վերքերով լեցուն և պայթյուններից ծաղկատար դաշտը, և շարունակում է անլսելի շրջյունով իջնել ու իջնել: Խրամատների ներսում տաք է. զինվորները խոնավ հատակները ծածկել են ծղոտի՝ ողջ ամառը արևից չորացած ու սեղմված խրձերով և նստած գրուցում ու ծխում են իրենց հանապազօրյա ծխախոտը: Նույնիսկ կտուրը, կառուցված լինելով երիտասարդ ծառերի բներից, ծածկված է մի թիզ հողով: Ամեն ինչ շատ հարմարավետ է, սակայն բոլորս էլ հասկանում ենք՝ թշնամու հետ ընդհարումն անխուսափելի է. առավոտ ծեփին գնալու ենք հարձակման:

1.2. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են մեծատառով (1 միավոր):

- 1) ՄԱՅՔԼ ԱՌԼԵՆ ԿՐՏՍԵՐ, ԱՇՈՏ ԵՐԿՐՈՐԴ, ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՎԱՆԴԱԿ, ՁԱԽՈՐԴ ՓԱՆՈՍ
- 2) ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ԱՇՈՏ ԲՈՆԱՎՈՐ, ՎԻՇԱՊԱՔԱՂ ՎԱՀԱԳՆ, ՄԱՐԻԱՍ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ,
- 3) ԽՐԻՄՅԱՆ ՀԱՅՐԻԿ, ԵՐԵՎԱՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ, ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ
- 4) ՓՈՔՐ ՄՀԵՐ, ՄՈՎՍԵՍ ԱՌԱՔՅԱԼ, ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐՏԱՇԵՍ Ա ԲԱՐԻ

1.3. Նշել այն շարքը, որի բոլոր բառերի բոլոր բաղադրիչները գրվում են միասին (1 միավոր).

1) ժող(գործիքներ), Հրագդան(հեկ), աշխարհ(ընկալում), հյուսիս(արևմուտք), օր(ավուր)

2) ոչ(ոք), ոչ(ու)փուչ, ոչ(ինչ), գիտ(խորհուրդ), հյուսիս(կովկասյան)

3) լույս(ընծայում), տարեց(տարի), բուժ(սպասարկում), նոր(գվինեական), թավալ(գլոր)

4) բաց(թողում), ի(սպան), տարուց(տարի), աղի(բուդի), մորե(մերկ)

2. Առաջադրանք 2 (7 միավոր)

2.1. Տրված բառաշարքերից խառը կարգով համապատասխան արմատներ և ածանցներ ընտրելով՝ կազմել վեց բարդածանցավոր բառ (3 միավոր).

ձեռնարկություն	գնդացի	ին	ձեռնագնդորդ
բաժանմունք	գնաճ	իչ	մասնաբաժին
արյունահեղություն	հանդամաս	ում	հեղափոխիչ
քաղքենի	եռագլուխ	արան	քաղաքապետարան
սերտորեն	տարափոխիկ	ավոր	սերտաճում
ձեռնածու	սեղանապետ	որդ	գլխարկավոր

2.2. Ընդգծել պարզ բառերը (4 միավոր) :

Փխրուն, ծմակուտ, **խրթին**, **հրավեր**, խրամատ, **որկոր**, **պատիվ**, թթվաշ, փոթորիկ, **սպեղանի**, բեկոր, **ճարպիկ**, մարտիկ, կտրուկ, **կարկուտ**, թերթոն, ապիկար, դաշնամուր, հոտաղ, բուհ, **սափոր**:

Առաջադրանք 3 (8 միավոր)

3.1. Ընտրել և գրել հոմանիշների վեց զույգ (3 միավոր).

հոլանի, թնջուկ, լերկ, խեթ, կարպետ, խոժոռ, հանգույց, քսու, խսիր, շողում, բուսագուրկ, մերկ:

հոլանի-մերկ

թնջուկ-հանգույց

լերկ-բուսագուրկ

խեթ-խոժոռ

կարպետ-խսիր

քսու-շողում

3.2. Ընտրել և գրել հականիշների վեց զույգ (3 միավոր).

խախուտ, հեղգ, տամուկ, ընչաքաղց, գոս, նսեմ, խոր, կայուն, շոայլ, ծանձաղ, ժրաջան, վեհապանձ:

խախուտ-կայուն

հեղգ-ժրաջան

տամուկ-գոս

ընչաքաղց-շոայլ

նսեմ-վեհապանձ

խոր-ծանձալ

3.3. Գտնել երկու շարք, որոնցում դարձվածքների իմաստների սխալ բացատրություն կա (2 միավոր)։

ա/ մեկը երկու դառնալ - շատանալ, մի բուռ - կուչ եկած, մեջ-մեջ անել - յուրացնել

բ/ ուսերին նստել - իրեն ենթարկել, քար կտրել - աշխատել, փոշի դառնալ - վերանալ

գ/ քթի տակ - աննկատելի, տեղիք տալ - պատճառ դառնալ, վիզը ծուռ - խեղճ

դ/ լեզվին տալ - համտեսել, հաց կտրել - բարեկամանալ, ոտքի տակ առնել - ձեռնել

ե/ տեղը դնել - փոխարինել, սև թուղթ - մահագույժ, տաք գլուխ - զինովցած

զ/ մի գլուխ - անդադար, օձիքը բռնել - պահանջել, քիթ քթի - մոտ

Առաջադրանք 4 (8 միավոր)

4.1. Ընդգծել նախադասության մտքին համապատասխանող բառը (2 միավոր)։

ա) Աղջիկը, պատուհանի մոտ նստած, հիանում էր առավոտից եկող (շաղափ, **շառափ**) և երագում հարսանեկան ճերմակ զգեստի մասին։

բ) Հոգնած ծերունին ստեպ-ստեպ կախում էր գլուխը, և կոպերը ծանր (կուպր, **կապար**) նման իջնում էին տամկացած աչքերին։

գ) Տնօրենը խոստացել էր վերանայել իր վերաբերմունքը այն բանից հետո միայն, երբ (**վերահասու**, վերահաս) կլինեք բոլոր կողմերի տեսակետներին։

դ) Երիտասարդ երգահանի ստեղծագործություններին ոչ ոք լուրջ չէր (վերաբերում, **վերաբերվում**), քանի որ դրանք շատ միօրինակ էին։

4.2. Նշել ճիշտ տարբերակները (4 միավոր)։

Ձորացույցներ, **ձեզ պես**, իրեն երեսից, **հանձին ուսուցչի**, մի՛ք խոսեք, առանց գիրք, **դիտանցքեր**, **գերեզոք**, քո գրիչդ, փախչեցի, **կորի՛ր**, քեզ մեջ, ի շնորհիվ, **քո մոտով**, աշխատացնել, ձեզ վրայով, **խաբվել**, բազմիցս անգամ, մի՛ գտի, **մոտեցնել**, հանձինս ուսանողի, տուժվել։

4.3. Փակագծերում տրված բառերը տեղադրել նախադասությունների մեջ՝ դրանք ենթարկելով համապատասխան փոփոխությունների (2 միավոր)։

Հեռվում կանգնած՝ նա **խոնջացած** հայացքն ուղղեց մայր Արաքսի **խայտացող** ալիքներին, և ամբողջովին **մոռացվեցին** նախորդ օրերի՝ միտք **պղտորող** տխուր անցուդարձը, պալատական խարդավանքը։

(մոռանալ, պղտորել, խոնջանալ, խայտալ)

Առաջադրանք 5 (6 միավոր)

5.1. Գտնել և ուղղել խնդրառության սխալները (2 միավոր)։

ա) Ոստիկանները կատարված հանցանքի մեջ այդ բարձրաստիճանի երիտասարդին էին կասկածում:

բ) Խթանելով տնտեսության զարգացմանը՝ պետությունը փորձում է լուծել սոցիալական խնդիրները:

գ) Հաջորդ վայրկյանին սթափվեցին մարդիկ, և ծափերը փշրեցին դահլիճի քար լռությունը:

դ) Ես երախտապարտ եմ Ձեզից այդպիսի օգնության համար:

5.2. Գտնել և ուղղել համաձայնության սխալները (2 միավոր):

ա) Ամեն ինչ՝ միջօրեի տապը, տոթն ու գաղջ օդը, անտանելի էին էր դարձել:

բ) Նախարարը ներկա է եղել հայոց լեզվի և գրականության քննությանը, և ընդունելության գործընթացը նրա կողմից գնահատվել է դրական:

գ) Նա մի փոքր մտածեց և վերահասու դառնալով կատարվածին՝ բարձրաձայն ասաց, որ անխուսափելի է են կտրուկ քայլերը. իրավիճակը շտկել չի լինի:

դ) Նա այն մարդկանցից է, որ, հասնելով մեծ փառքի, բնավ չեն մեծամտանում:

5.3. Նշել բարդ ստորադասական նախադասության պարզեցման ճիշտ տարբերակը (1 միավոր):

Այդ մարդու հոգեկան աշխարհի երկվությունը վճռվում է նրանով, որ նա խզում է իր կապերը մտերիմ մարդու հետ:

ա) Այդ մարդու հոգեկան աշխարհի երկվությունը մտերիմ մարդու հետ իր կապերը խզելն է:

բ) Այդ մարդու հոգեկան աշխարհի երկվությունը վճռվում է մտերիմ մարդու հետ իր կապերը խզելուց:

գ) Այդ մարդու հոգեկան աշխարհի երկվությունը վճռվում է մտերիմ մարդու հետ իր կապերը խզելու պատճառով:

դ) Այդ մարդու հոգեկան աշխարհի երկվությունը վճռվում է նրա՝ մտերիմ մարդու հետ իր կապերը խզելով:

5.4. Նշել ուղղակի խոսքի փոխակերպման ճիշտ տարբերակը (1 միավոր):

- Դա քո մարդիկ էլ կարող են անել, սպարապե՛տ, - ասաց դահճապետը թուրքական լռությունից հետո, - իսկ ես, ինչ էլ լինի, իմ ձեռքերը չեմ թաթախի իմ ազգակիցների արյան մեջ:

ա) Դահճապետը թուրքական լռությունից հետո ասաց, որ դա սպարապետի մարդիկ էլ կարող են անել, իսկ նա, ինչ էլ լինի, իր ձեռքերը չի թաթախի իր ազգակիցների արյան մեջ:

բ) Դահճապետը թուրքական լռությունից հետո ասաց սպարապետին, որ դա նրա մարդիկ էլ կարող են անել, իսկ ինքը, ինչ էլ լինի, իր ձեռքերը չի թաթախի իր ազգակիցների արյան մեջ:

գ) Դահճապետը թուրքական լռությունից հետո ասաց, որ դա իր մարդիկ էլ կարող են անել, իսկ նա, ինչ էլ լինի, իր ձեռքերը չի թաթախի իր ազգակիցների արյան մեջ:

դ) Դահճապետը ասաց թուրքական լռությունից հետո, որ իր մարդիկ կարող են դա անել, իսկ նա, ինչ էլ լինի, իր ձեռքերը չի թաթախի նրա ազգակիցների արյան մեջ: